ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻԻ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան **09/24/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝

<<Հանրապետություն>> խմբակցության անդամ՝ Արամ Քոչարյանը,

<<Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության անդամներ՝ Արամայիս Աղաբեկյանը,Հովնան Բեգլարյանը, Սեդրակ Գալստյանը, Սվետլանա Եգանյանը, Ջոնիկ Մարուքյանը,

Նիստին մասնակցում էին՝
Վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և բնակիչներ,

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը.
1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2024թ. սեպտեմբերի 24-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2) Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Թումանյան համայնքի, սեփականություն հանդիսացող Մարց գյուղի վարչական տարածքում գտնվող 06-071-0101-0014 ծածկագրի 0.11279 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասը մրցույթով, վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին
3) Թումանյան քաղաքի 06-004-0015-0058 ծածկագրի 0.005739 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդային կարգով օտարելու

մասին
4) Հողամասի նպատակային նշանակության փոխելու մասին
5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտներից և այլ հողերից 2757,0 հա մակերեսով հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին
6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթը (գոտիավորման մասով) հաստատելու մասին
7) Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 7-ի N 80-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
8) Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի N 81-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
9) Թումանյան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշելու մասին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐՑ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-071-0101-0014 ԾԱԾԿԱԳՐԻ 0.11279 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի N 20112023-06-0073 վկայականը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Մարց գյուղի կադաստրային քարտեզի06-071-0101-0014ծածկագրի 0.11279հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:
2.Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկայինվճարը՝ 14000 (տասնչորս հազար) ՀՀ դրամ,նախավճարի չափը մեկնարկային վճարի 5%,քայլի չափը՝ մեկնարկայինվճարի 5%-ի չափով:
3.Գյուղատնտեսական նշանակության հողամասը տրամադրվում է 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:
5.ՈՒԺը կորցրած ճանաչել 2023թվականի դեկտեմբերի 22-ի N 105-Ա որոշումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 06-004-0015-0058 ԾԱԾԿԱԳՐԻ 0.005739 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13 կետի գ/ ենթակետով և V-րդ բաժնի պահանջներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի N 29072024-06-0044 վկայական/ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող 06-004-0015-0058 ծածկագրում գտնվող 0,005739 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գինը սահմանել՝ 169000 (հարյուր վաթսունինը հազար) ՀՀ դրամ:
2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 31-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 09.10.2023թ.թիվ 85 դրական եզրակացությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղում քաղաքացի Հրանտ Սպարտակի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 06-035-0125-0165 կադաստրային ծածկագրով 1,45933 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Առաջարկել Հրանտ Սպարտակի Սահակյանին համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության

փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 3 149 963,8 (երեք միլիոն հարյուր քառասունինը հազար ինը հարյուր վաթսուներեք դրամ ութ լումա) ՀՀ դրամ:
3.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքիհողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և
համայնքի հողային հաշվեկշռում:
4.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 24.10.2023թ. թիվ 68-Ա որոշումը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏՆԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ՀՈՂԵՐԻՑ 2757,0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ /ՁԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշումը և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 46.2. կետի դ) ենթակետն ու հաշվի առնելով սույն թվականի հունիսի 21-ին Թումանյան համայնքի, «Պախրա» բնապահպանական-սոցիալական հասարակական կազմակերպության և WWF- Հայաստանի միջև կնքված «Մոտկոր» համայնքային բնապահպանական տարածքի վայրի կենդանիների ապրելկերպի 2024-2032թթ.կառավարման պլանի իրականացման միջոցառումների դրամաշնորհային համաձայնագիրը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության ընդհանուր 2857,0 հա մակերեսով արոտը և յլ հողատեսքերը համաձայն հավելվածի, սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 7 /յոթ/ տարի ժամկետով տրամադրել «Պախրա» բնապահպանական-սոցիալական հասարակական կազմակերպությանը Հարավային Կովկասում էկոմիջանցքների աջակցություն բնապահպանական ծրագիր իրականացնելու նպատակով:
2. Սերվիտուտի տրամադրման տարեկան վարձավճար սահմանել 1 հեկտարի համար 400 /չորս հարյուր/ ՀՀ դրամ:
3. Համայնքապետարանիաշխատակազմիքարտուղարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄՅԱՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍՈՎ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ՌՈՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի 14,3 հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումով հաստատված կարգի 54-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի N 4/Ա-8 դրական եզրակացությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքը (Թումանյան քաղաք, Դսեղ,Լորուտ,Քարինջ,Մարց, Ահնիձոր,Շամուտ, Աթան Չկալով բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-3 համակցված տարածական պլանավորման նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 80-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀօրենքի 33-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Կադաստրիկոմիտեի 12/09/2024թ <<Գույքի առանձին որակ ական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների(սահմանափակու մների) վերաբերյալ >> N ԱՏ-12092024-06-0880 տեղեկանքը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 7-ի <<ԴՍԵՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 80-ԱՈՐՈՇՄԱՆ մեջ 1-ին կետը փոփոխել և կարդալ հետևյալ խմբագրությամբ՝

1) Փոփոխել <<Դսեղ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը <<Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվամբ և հաստատել<<Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստա տություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի N 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ստորև նշված գույքն ընդգրկել Թումանյանի համայնքապետարանի գույքացանկում՝ համապատասխան սկզբնական արժեքներով, այդ թվում՝

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔ				
h/h	անվանում	չ/մ	քանակ	գին	գումար
1	Բջջային հեռախոս /A. iPhone 15 128GB Black/	հատ	1	350900	350900
	ընդամենը			350900	350900

2.Բջջային հեռախոսի գնման նպատակը՝ Ավագանու արտագնա նիստերի առցանց հեռարձակումն ապահովելուի համար:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը որոշել 2024 թվականի հոկտեմբերի 25-ը, ժամը 11:00:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Թումանյան համայնքի ավագանու նիստին մասնակից ավագանու անդամներ՝

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ՆԻԿԱԼ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԽԱՉԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԿԱՐՈ

ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ

ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ

ՎԱՆՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

Նիստն արձանագրեց՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**